ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

ՀՀ ԿԲ նախագահի 2025թ. հունվարի 22-ի Թիվ 1/17 Ա որոշմամբ գրանցված ազդագրի

«Վիվա Արմենիա» ՓԲԸ
Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, Երևան 0015, Արգիշտիի փող., 4/1
Հեռ.՝ +374 60 77 11 11
Էլ. փոստ՝ info@viva.am
Կայք՝ www.viva.am

«Ամերիաբանկ» ՓԲԸ
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 2
Հեռ.՝ (+37410) 56 11 11, Ֆաքս՝ (+37410) 51 31 33
Էլ.-փոստ՝ info@ameriabank.am
Կայք՝ www.ameriabank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի տեսակը՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	800,000 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	80,000,000 (ութսուն միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնը՝	տարեկան 7.65% (յոթ ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական տոկոս)
Շրջանառության ժամկետը՝	36 (երեսունվեց ամիս)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 3

ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 4

1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ 4

1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը 8

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 10

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ 11

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը 11

1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները 12

1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը 13

1.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ 13

ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 17

2.3 Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ 17

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները 20

ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 23

3.9 Թողարկողի կառավարման մարմինները և անդամները 23

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ սկզբնագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
1. Տիգրան Գասպարյան	Խորհրդի նախագահ		03.02.2025թ.
2. Ալ-Նուր Գուլամալի Աբդուլլա Ռամջի	Խորհրդի անդամ		03.02.2025թ.
3. Դենիել Ջեյ Էքերթ	Խորհրդի անդամ		03.02.2025թ.
4. Սպիրոս Իերոթեոու	Խորհրդի անդամ		03.02.2025թ.
5. Լևոն Ռուբինյան	Խորհրդի անդամ		03.02.2025թ.
6. Արմեն Ավետիսյան	Գլխավոր տնօրեն		03.02.2025թ.
7. Անետա Էփրիկյան	Ֆինանսների և հաշվապահության վարչության պետ		03.02.2025թ.
8. Լուսինե Զաքարյան	Գլխավոր հաշվապահ		03.02.2025թ.
9. «Ամերիաբանկ» ՓԲԸ՝ ի դեմս Շուշանիկ Հովսեփյանի	Տեղաբաշխող		03.02.2025թ.

Ստորագրությունները հավաստում եմ՝

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Ավետիսյան	Գլխավոր Տնօրեն		03.02.2025թ.

ՄԱՍ 1ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով www.viva.am և www.ameriabank.am կայքերից:

1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Լրիվ ֆիրմային անվանում	
Հայերեն՝	«Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն
Ռուսերեն՝	«Вива Армения» Закрытое акционерное общество
Անգլերեն՝	“Viva Armenia” Closed Joint-Stock Company
Կրճատ ֆիրմային անվանում	
Հայերեն՝	«Վիվա Արմենիա» ՓԲԸ
Ռուսերեն՝	ЗАО «Вива Армения»
Անգլերեն՝	“Viva Armenia” CJSC
Պետական գրանցման վայր՝	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, 0015, Արգիշտի փ. 4/1
Պետական գրանցման համար՝	273.120.03909
Գործունեության վայր՝	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, 0015, Արգիշտի փ. 4/1
Կապի միջոցներ՝	Հեռ.՝ +374 60 77 11 11, էլ. փոստ՝ info@viva.am Կայք՝ www.viva.am

Թողարկողին առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է դիմել էլ. փոստ՝ info@viva.am, հեռ.՝ +374 60 77 11 11:

1.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«Վիվա Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև «Ընկերություն», «Թողարկող» կամ «Վիվա Արմենիա») ստեղծվել է 2004թ. նոյեմբերին:

Ընկերությունը Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ «ՀՀ») շարժական կապի խոշորագույն օպերատորն է, որն իր բաժանորդներին առաջարկում է շարժական և ֆիքսված կապի ծառայություններ, ինչպես նաև ամպային ծառայություններ և այլ կոնվերգենտ պրոդուկտներ:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ներկայում՝ Բարձր տեխնոլոգիաների նախարարություն) կողմից 2004թ. նոյեմբերի 4-ին տրված «Հեռահաղորդակցության ծառայությունների մատուցում» թիվ 765 լիցենզիայի հիման վրա՝ 15 տարի ժամկետով: Վերջինս երկարաձգվել է մինչև 2034թ. նոյեմբերի 4-ը՝ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019թ. նոյեմբերի 1-ի թիվ 403Ա որոշման հիման վրա:

Ընկերության ներցանցային առաջին զանգը կատարվեց 2005թ.-ի հուլիսի 1-ին: Ընկերության մուտքը բջջային կապի շուկա վերջ դրեց ոլորտում գործող մենաշնորհին:

2006թ. հունվարի դրությամբ շարժական կապի շուկայում Ընկերության մասնաբաժինը կազմեց 50% (ավելի քան 350,000 բաժանորդ): Նույն թվականի սեպտեմբերին Ընկերության բջջային ցանցը հասանելի էր ՀՀ բնակելի տարածքի 90%-ում:

2007թ. սեպտեմբերին Ընկերության բաժնետոմսերի 80%-ի վաճառքից հետո վերջինս անցավ «Մոբայլ ՏելեՍիսթեմս» ՀԲԸ (այսուհետ՝ «ՄՏՍ») վերահսկողության տակ: Նույն թվականին Ընկերության ծառայություններից օգտվողների թիվը գերազանցեց 1 միլիոնը:

2008թ.-ից Ընկերությունը սկսեց գործել «Վիվա-ՄՏՍ» ապրանքանիշի ներքո (նախկինում՝ «ՎիվաՍել»): Նույն թվականին Ընկերության մասնաբաժինը շարժական կապի շուկայում գերազանցեց 78%-ը:

2009թ. ապրիլին Ընկերությունն ազդարարեց երրորդ սերնդի 3G ցանցի կոմերցիոն մեկնարկը: Նույն թվականին իրականացվեց 3G ցանցի գործարկում մարզերում:

Ընկերությունը 2010թ.-ին ՀՀ-ում առաջին անգամ գործարկեց 4G/LTE ցանցը:

2012թ.-ին Ընկերությունն իր դուստր ձեռնարկության միջոցով թողարկեց «ՄոբիԴրամ» էլեկտրոնային դրամապանակը, իսկ 2016թ.-ին՝ նաև «ՄոբիԴրամ» բջջային հավելվածը:

2015թ.-ին Ընկերությունն առաջին օպերատորն էր, որ ներդրեց տեղեկատվական անվտանգության կառավարման ISO/IEC 27001:2013 միջազգային ստանդարտը:

2017թ.-ին Թողարկողը, ձեռք բերելով լայնաշերտ ինտերնետի մատակարար, օպտիկամանրաթելային սեփական ցանց ու տեխնոլոգիական հզորություններ, ինչպես նաև բաժանորդային զգալի բազա ունեցող «ADC» ընկերության ակտիվները, մուտք գործեց B2B ֆիքսված կապի շուկա: Նույն թվականին Ընկերությունը թողարկեց «My Viva-MTS» բջջային հավելվածը:

2019թ. օգոստոսին ՄՏՍ-ը ձեռք բերեց Ընկերության բաժնետոմսերի մնացած 20 տոկոսը:

2023թ.-ի ապրիլին Ընկերությունը Երևան քաղաքի փոքր կենտրոնում և Գյումրիի կենտրոնական հատվածում առաջին անգամ գործարկեց 5G ցանցը:

2024թ. հունվարի 24-ին Վիվա-ՄՏՍ-ը հայտարարեց բաժնետիրոջ փոփոխության մասին: Ըստ այդմ Ընկերությունն անցավ «Ֆեդիլքո Գրուպ Լիմիթիդ» (“Fedilco Group Limited”) ընկերության հսկողության տակ: Վերջինս բաժնետոմսերի 20%-ն անհատույց փոխանցել է ՀՀ-ին:

1.1.2.1 *Թողարկողի ռազմավարությունը*

Չնայած շուկայական թեժ մրցակցային պայմաններին և անդադար առաջ եկող մարտահրավերներին, Թողարկողի երկարաժամկետ ռազմավարությունը մնում է անփոփոխ: Ընկերությունը շարունակում է պահպանել առաջատարությունը բիզնեսի դիվերսիֆիկացիայի միջոցով, ի թիվս.

- Թվային կոնվերգենցիայի զարգացման, հիմնական պրոդուկտներում ժամանակակից ծառայությունների և գործընկերների բաժանորդագրության փաթեթների ներկայացման,
- VoLTE-ի,
- VoWi-Fi-ի,
- SMS over Wi-Fi-ի,
- 5G-ի:

Այս ամենը հեռահաղորդակցության կայուն հիմք է ստեղծում, որն ապահովում է Ընկերության հիմնական ակտիվի՝ բաժանորդների լավագույն ծառայություններից օգտվելու հնարավորությունը:

Ընկերության ընտրած ռազմավարության արդյունավետությունը հաստատվում է ֆինանսական և գործառնական արդյունքներով: Եկամուտներն աճում են, կայուն են հիմնական բիզնես ոլորտները, իսկ թվային ծառայությունների էկոհամակարգում գործընկերությունների ծառայություններից օգտվող հաճախորդների թիվը գրանցում է երկնիշ աճ: Էկոհամակարգից օգտվող հաճախորդներն ունեն ավելի բարձր սպառողների հավատարմության ինդեքս (NPS) և ցածր արտահոսք: 2025-2030թթ.-ին Ընկերությունն ակնկալում է, որ այս դինամիկան կշարունակվի:

Ֆիլմեր ու սերիալներ դիտելու մշակույթը, ժամանակակից տեխնոլոգիաներով պայմանավորված, թվային փոխակերպման է ենթարկվել ամբողջ աշխարհում: Ցանկացած վայրից և ցանկացած պահի բովանդակության բազմազանություն ու

հասանելիություն ապահովող սթրիմինգային հարթակները շարունակում են գրավել ավելի ու ավելի լայն լսարաններ: Այս ամենը հաշվի առնելով՝ էկոհամակարգի զարգացման շրջանակներում Ընկերությունն սկսել է համագործակցություն առաջին հայկական սթրիմինգային հարթակ հանդիսացող «Kinodaran»-ի հետ: Արդյունքում հայկական կինոժառանգությունը և մերօրյա կինոն Ընկերության բաժանորդների համար դարձել են ավելի հասանելի, քանի որ «Kinodaran» հավելվածն՝ առանց բաժանորդագրության վճարի, ներառված է մի շարք սակագնային պլաններում:

2024թ.-ի առաջին կիսամյակն առանձնահատուկ էր նաև դիրքավորման առումով: Ընկերությունը նշեց իր 19-ամյակը ռեբրենդինգով: Ընկերությունը ներկայացրեց նոր ապրանքանշան և կարգախոս, որոնք հաճախորդի շուրջ են կենտրոնացնում մատուցվող բոլոր ծառայությունները:

Հատկանշական է, որ խիստ մրցակցային շուկայում, որտեղ մյուս մրցակիցները ներկայացնում են կոնվերգենտ լուծումներ, երկար տարիներ Ընկերությունը միակ օպերատորն էր, որ տնային տնտեսություններին չէր ապահովում ֆիքսված կապ:

2024թ.-ին Ընկերությունը գործարկեց RED կոնվերգենտ հարթակը, որին կարող են միանալ բոլոր այն ֆիքսված կապի օպերատորները, որոնք համապատասխանում են Ընկերության կողմից ներկայացվող որակի չափանիշներին: Այս հարթակը նպատակ ունի միավորել ֆիքսված և շարժական ծառայությունները՝ տրամադրելով հաճախորդներին միասնական փաթեթ, ինչն ավելի հարմարավետ է դարձնում կապի ծառայությունները բաժանորդների համար և նրանց հնարավորություն է տալիս ընտրություն կատարել շուկայում առկա կոնվերգենտ պրոդուկտներից: Սա առանձնահատուկ առաջարկ է շուկայում, որը խթանում է մրցակցությունը, նպաստում ծառայությունների որակի բարելավմանը: Այն բարձրացնում է բաժանորդների գոհունակությունը, նվազեցնում արտահոսքը դեպի այլ օպերատորներ և ստեղծում հետագա առաջընթացի հնարավորություններ: Սրան զուգահեռ Ընկերությունը շարունակում է ընդլայնել իր ներդրած 5G ցանցն ու կատարելագործել 3G ու 4G ցանցերը:

Գործընկերների, հաճախորդների և բաժնետերերի հանդեպ պարտավորությունների կատարումը մնում է Ընկերության ռազմավարական անփոփոխ առաջնահերթությունը: Բիզնեսի կառավարման բոլոր մակարդակներում պահպանվում է համապատասխանության (Compliance) մշակույթի բարձր մակարդակը և պատասխանատու բիզնես վարքագծի լավագույն փորձին հետևելը, ինչն Ընկերությանը թույլ է տալիս ապահովել կայուն զարգացում և պաշտպանել Ընկերությունն առաջացող ռիսկերից:

Տարիներ շարունակ Ընկերությունն իրականացրել է սոցիալական ներդրումների ծրագրեր ՀՀ-ում: Առաջնորդվելով ISO 26000 (Սոցիալական պատասխանատվության միջազգային ստանդարտով), FCPA (Foreign Corrupt Practices Act) նորմերով և Մեծ Բրիտանիայի հակակոռուպցիոն օրենսդրության (United Kingdom Bribery Act) պահանջներով՝ Ընկերությունը ձեռք է բերել երկար տարիների անփոխարինելի փորձ առօրյա կյանքի, աշխատանքի, հեռահաղորդակցության և այլ սոցիալական կարիքները բավարարելուն ուղղված

ծրագրերի իրականացման մեջ, որը թույլ է տալիս ստեղծել և ապահովել էլ ավելի կայուն ապագա ամբողջ հասարակության համար:

1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալն առ 30 հունիս, 2024թ. կազմել է 550,000,000 (հինգ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 550,000 (հինգ հարյուր հիսուն հազար) հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 1,000 (մեկ հազար) անվանական արժեքով: Թողարկողի բաժնետերերի ցանկը (ներառյալ բաժնեմասնակցության չափերը) ներկայացված է սույն Ազդագրի 3.13.1 գլխում:

1.1.4 Թողարկողի բիզնեսի նկարագիրը

Ընկերությունը մատուցում է հեռահաղորդակցման ծառայություններ՝ ներառյալ անլար և ֆիքսված կապի միջոցով ձայնային և տվյալների փոխանցման, ինտերնետի տրամադրման ծառայությունները, ինչպես նաև իրականացնում է բջջային հեռախոսների և աքսեսուարների վաճառք, ամպային և ֆինանսական ծառայությունների մատուցում:

1.1.5 Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը

Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը ներկայացված է **Հավելված 2-ում**:

1.1.6 Թողարկողի խմբի կառուցվածքը

Թողարկողի խմբի կառուցվածքը հասանելի է Ազդագրի 3.5.1 գլխում:

1.1.7 Ակտիվների որակը

2024թ.-ի հունիս 30-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 71.2 միլիարդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ կապիտալի համարժեքության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 60%:

1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը

1.2.1 Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագիրը ներկայացված է Ազդագրի 3.2 գլխում:

Մրցակցային ռիսկ: Թողարկողի գործունեության՝ հեռահաղորդակցության շուկայում առկա է մրցակցություն, և ժամանակ առ ժամանակ հնարավոր է դրա սրացում, ինչը կարող է բացասաբար ազդել Ընկերության գործառնական և/կամ ֆինանսական ցուցանիշների վրա:

Կապիտալ ծախսերի և շրջանառու կապիտալի հետ կապված ծախսեր: Ընկերության գործունեության ոլորտն իր տեսակով կապիտալատար է, և իր մրցակցային դիրքը պահպանելու և/կամ առավել բարելավելու համար Ընկերությունն իրականացնում է մեծ ծավալի կապիտալ և շրջանառու կապիտալի ներդրումներ:

Տնտեսական, քաղաքական և սոցիալական ռիսկեր: Ընկերության, ինչպես նաև մրցակիցների և առհասարակ ոլորտի հաջողությունը սերտորեն կապված է ՀՀ-ում ընդհանուր տնտեսական զարգացումների հետ: ՀՀ տնտեսական վիճակի վատթարացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ հաճախորդների վճարունակության և սպառման օրինաչափությունների վրա:

Արտարժութային ռիսկ: Ընկերության կապիտալ ներդրումների մեծ մասը, ինչպես նաև որոշակի տեսակի ծառայությունների (ռոումինգ, միջազգային զանգեր, միջազգային կապուղիներ և այլն) և մեծածախ ինտերնետի առուվաճառքն իրականացվում է արտարժույթով, ուստի Թողարկողի մոտ առկա է նաև արտարժութային ռիսկի գործոնը՝ կապված փոխարժեքի հնարավոր տատանումների հետևանքով ծախսերի աճի և շահութաբերության նվազման հետ:

Պահանջարկի նվազման ռիսկ: ՀՀ-ում հեռահաղորդակցության ծառայությունների նկատմամբ պահանջարկն էական ազդեցություն ունի Թողարկողի և մրցակիցների գործունեության վրա:

Հաճախորդների արտահոսքի ռիսկ: Շարժական և ամրակցված կապի ոլորտներին հատուկ է բաժանորդների արտահոսքը, որը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է մրցակցության բարձր մակարդակով:

Դատական գործընթացներ: Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնց մասով Ընկերության համար անբարենպաստ դատական ակտերի կայացումը և ուժի մեջ մտնելը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական ցուցանիշների և գործունեության վրա: Դատական վարույթների մասին տեղեկատվությունը ներկայացված է Ազդագրի 3.12.4 կետով:

1.2.2 Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Տոկոսադրույքի ռիսկ: Շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների բարձրացումը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Վերաներդրման ռիսկ: Վերաներդրման ռիսկը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր, իրենց դրամական միջոցները, պարտատոմսերում ներդնելու նպատակով, պետք է փոխարկեն մի արժույթից մեկ այլ արժույթի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր:

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Ընկերությունը գործունեություն է ծավալում մի ոլորտում, որը մշտապես գտնվում է զարգացման փուլում, և որտեղ ի հայտ են գալիս նորագույն տեխնոլոգիաներ և նոր

պահանջներ: Ընկերության ղեկավարությունը մշտապես հետևում է շուկայի զարգացումներին և Ընկերության ռազմավարությունը հարմարեցնում նոր զարգացումներին:

2022-2024 թթ.-ին Ընկերության եկամուտները գրանցել են տարեկան 4-5% աճ: OIBDA-ն վերջին երկու տարիներին նույնպես աճել է տարեկան 5-7%-ով, և ակնկալվում է, որ ապագայում կցուցաբերի կայուն աճ: Ընկերությունն ամեն տարի վճարում է շահաբաժիններ և իր գործառնությունների համար պահպանում է դրամական միջոցների բավարար մնացորդ:

2024թ. հունվարի 24-ին Ընկերությունը հայտարարեց բաժնետիրոջ փոփոխության մասին: Ըստ այդմ՝ Ընկերությունը դադարեց ռուսական «ՄՏՍ» խմբի մաս կազմել: «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի նոր բաժնետերը «Ֆեդիլքո Գրուպ Լիմիթիդ»-ն (“Fedilco Group Limited”) է:

Ընկերությունը չունի այնպիսի էական պարտավորություններ ապագայում իրականացվելիք ներդրումների գծով, որոնք արտացոլված չեն Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ

Թողարկողի 2022 և 2023 թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ը՝

ՀՀ, 0015, Երևան, Գրիգոր Լուսավորիչ 9 («Երևան Պլազա» բիզնես կենտրոն)
հեռ.՝ (+37410) 500964/61
կայք՝ http://www.grantthornton.am

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

Թողարկողի կառավարման մարմիններն են՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ Ընդհանուր Ժողով), Խորհուրդը և գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը:

Թողարկողի բաժնետերերն են՝

Բաժնետեր	Բաժնեչափ (1000 ՀՀ դրամ)	Բաժնեչափ (%)
«ՖԵԴԻԼՔՈ ԳՐՈՒՊ ԼԻՄԻԹԻԴ»	440,000	80%

Հայաստանի Հանրապետություն	110,000	20%

Թողարկողի Խորհուրդը կազմված է 5 (հինգ) անդամներից.

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Տիգրան Գասպարյան	Թողարկողի խորհրդի նախագահ	շուրջ 20 տարի
Ալ-Նուր Ռամջի (Al-Noor Ramji)	Խորհրդի անդամ	շուրջ 20 տարի
Դանիել Էկերտ (Daniel Eckert)	Խորհրդի անդամ	շուրջ 20 տարի
Սպիրոս Իերոթեու (Spyros Ierotheou)	Խորհրդի անդամ	շուրջ 20 տարի
Լևոն Ռուբինյան	Խորհրդի անդամ	շուրջ 18 տարի

Թողարկողի գործադիր մարմնի կառուցվածքը՝

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Արմեն Ավետիսյան	Գլխավոր տնօրեն	շուրջ 20 տարի

Թողարկողի աշխատակիցների ընդհանուր թիվն առ 30.06.2024թ. կազմել է 1139:

1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

Թողարկվող պարտատոմսերն (այսուհետ՝ Պարտատոմս կամ Պարտատոմսեր) անվանական ոչ փաստաթղթային են, բաժանելի չեն և փոխարկելի չեն:

Պարտատոմսերի դիմաց տոկոսային եկամուտը վճարվելու է արժեկտրոնների տեսքով:

Մեկ Պարտատոմսի անվանական արժեքը 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար է: Թողարկվող և տեղաբաշխվող (վաճառվող) Պարտատոմսերի քանակը կազմում է 800,000 (ութ հարյուր հազար) հատ՝ 80,000,000 (ութսուն միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով: Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը 10 (տասը) հատ է:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են այն արժույթով, որով թողարկվել են Պարտատոմսերը:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է թողարկման արժույթով՝ ԱՄՆ դոլարով:

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որի տարեկան մեծությունը, արտահայտված որպես տոկոս Պարտատոմսի անվանական արժեքից (տարեկան արժեկտրոնային եկամտաբերություն), կազմում է 7.65% (յոթ ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական տոկոս):

Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային անվանական եկամուտը վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ՝ Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերության ½ (մեկ երկրորդ) չափով:

Արժեկտրոնների հաշվարկման օր է համարվելու Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրերը:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն (թողարկողի կամ ներդրողի նախաձեռնությամբ (քոլ օպցիոն, փութ օպցիոն)) նախատեսված չէ:

Ընկերությունը Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները ուղղելու է առկա վարկային պարտավորությունների վերաֆինանսավորմանը և/կամ կապիտալ և այլ ռազմավարական ներդրումների իրականացմանը:

1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են ֆոնդային բորսայից դուրս, ուղիղ վաճառքի միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվելու է 2025թ. փետրվարի 12-ին և տևելու է 90 (իննսուն) աշխատանքային օր:

1.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ

1.8.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2024թ. I-ին կիսամյակ	2023թ. (Աուդիտ անցած)	2022թ. (Աուդիտ անցած)	2021թ. (Աուդիտ անցած)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից և գործառնական գործունեությունից հասույթ	27,392,570	53,696,566	51,373,970	49,203,442
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների և գործառնական գործունեության գծով ծախսեր	(19,637,513)	(39,251,201)	(37,470,462)	(40,285,638)

Գործառնական շահույթ (վնաս)	**7,755,057**	**14,445,365**	**13,903,508**	**8,917,804**
Ֆինանսական եկամուտներ	617,942	901,028	709,043	1,040,662
Ֆինանսական ծախսեր	(451,985)	(647,127)	(745,261)	(844,599)
Փոխարժեքի փոփոխությունից եկամուտ/(ծախս)	1,188,767	129,608	(5,117,486)	(2,691,081)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	**9,109,781**	**14,828,874**	**8,749,804**	**6,422,786**
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	**9,109,781**	**14,828,874**	**8,749,804**	**6,422,786**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(1,061,155)	(3,194,960)	(3,748,597)	(3,329,446)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	**8,048,626**	**11,633,914**	**5,001,207**	**3,093,340**

1.8.2 ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2024թ. I-ին կիսամյակ	2023թ. (Աուդիտ անցած)	2022թ. (Աուդիտ անցած)	2021թ. (Աուդիտ անցած)
Հիմնական միջոցներ	22,620,857	24,596,023	26,561,229	27,542,981
Ոչ նյութական ակտիվներ	9,987,018	11,566,102	11,871,620	11,955,876
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	4,945,756	4,263,784	4,323,121	4,746,720
Հետաձգված հարկային ակտիվներ	1,694,893	1,603,686	2,289,342	3,465,113
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	1,121,666	2,305,083	899,956	530,214
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**40,370,190**	**44,334,678**	**45,945,268**	**48,240,904**
Պաշարներ	622,966	506,663	739,811	1,378,456
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,402,250	2,811,050	3,516,303	3,609,302
Տրամադրված փոխառություններ	17,803,223	20,895,006	15,712,450	18,573,475
Կարճաժամկետ փոխառություններ աշխատակիցներին	300,336	302,373	276,095	256,532
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	-	-	-	9,661,874
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,687,361	9,529,024	10,228,068	4,311,474
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**30,816,136**	**34,044,116**	**30,472,727**	**37,791,113**
Ընդամենը ակտիվներ	**71,186,326**	**78,378,794**	**76,417,995**	**86,032,017**
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	550,000	550,000	550,000	550,000
Էմիսիոն եկամուտ		-	-	-
Կուտակված շահույթ	42,362,472	40,313,846	60,489,932	70,488,725
Պահուստային կապիտալ	82,500	82,500	82,500	82,500
Սեփական կապիտալի այլ տարրեր	-	-	-	-
Ընդամենը սեփական կապիտալ	**42,994,972**	**40,946,346**	**61,122,432**	**71,121,225**
Վարձակալության գծով պարտավորություններ	4,383,321	4,015,518	3,949,578	4,347,627
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	14,214,453	44,500	53,540	64,555
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**18,597,774**	**4,060,018**	**4,003,118**	**4,412,182**
Պարտավորություններ շահաբաժինների գծով	-	21,669,500	-	-
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	5,943,210	7,341,091	6,928,204	5,201,114
Ստացված ընթացիկ կանխավճարներ	1,131,905	1,445,315	1,230,011	1,474,271
Այլ կրեդիտորական պարտքեր	-	-	-	-
Այլ ընթացիկ պարտավորություններ	2,518,465	2,916,524	3,134,230	3,823,225
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**9,593,580**	**33,372,430**	**11,292,445**	**10,498,610**
Ընդամենը պարտավորություններ	**28,191,354**	**37,432,448**	**15,295,563**	**14,910,792**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**71,186,326**	**78,378,794**	**76,417,995**	**86,032,017**

1.8.3 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

հազ.դրամ

Ցուցանիշի անվանումը	2024թ. I-ին կիսամյակ	2023թ. (Աուդիտ անցած)	2022թ. (Աուդիտ անցած)	2021թ. (Աուդիտ անցած)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	9,529,024	10,228,068	4,311,474	7,319,405
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	9,860,474	25,615,661	25,937,089	22,171,689
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(18,988,496)	(23,153,568)	(1,533,254)	(12,313,684)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	7,084,721	(2,439,662)	(17,325,226)	(12,327,082)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	8,687,361	9,529,024	10,228,068	4,311,474

1.8.4 ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2024թ. I-ին կիսամյակ	2023	2022	2021
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	14,634	21,153	9,093	5,624
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	19.2%	22.8%	7.6%	4.1%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	10.8%	15.0%	6.2%	3.4%
Զուտ շահույթի մարժա (NPM)	29.4%	21.7%	9.7%	6.3%
Կապիտալի համարժեքության գործակից	0.60	0.52	0.80	0.83
Ֆինանսական կախվածության գործակից	0.66	0.91	0.25	0.21
Բացարձակ իրացվելիության գործակից	2.76	0.91	2.30	3.10
Ընթացիկ իրացվելիության գործակից	3.15	1.00	2.63	3.47
Ընդհանուր իրացվելիության գործակից	3.21	1.02	2.70	3.60
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	-	17.0	14.4	12.3
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	-	21.5	25.3	29.6
Պաշարների շրջանառելիության գործակից	-	55.6	31.1	25.6
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	-	6.6	11.8	14.2
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	-	4.9	5.4	5.7
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	-	75.2	67.3	63.8

* Ներկայացված ցուցանիշները միջինացված են

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 1-ում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.3 Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ

2.3.8 **Անվանական տոկոսադրույքը և այդ տոկոսների վճարման պայմանները**

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որի տարեկան մեծությունը, արտահայտված որպես տոկոս Պարտատոմսի անվանական արժեքից (տարեկան արժեկտրոնային եկամտաբերություն), կազմում է 7.65% (յոթ ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական տոկոս): Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային անվանական եկամուտը վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ՝ Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերության ½ (մեկ երկրորդ) չափով:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է թողարկման արժույթով՝ ԱՄՆ դոլարով:

Արժեկտրոնների հաշվարկման օր է համարվելու Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրերը:

Արժեկտրոնները Պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն Պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա վերջի դրությամբ Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Արժեկտրոնների վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 0.01 ԱՄՆ դոլար ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը):

Համաձայն Եռակողմ պայմանագրի՝ Դեպոզիտարիան Թողարկողի հանձնարարությամբ և Հաշվի օպերատորի միջնորդությամբ Թողարկողին մատուցում է արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման և արժեթղթերի մարման ծառայություններ: Արժեկտրոնի գումարները վճարվում են անկանխիկ ձևով: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում Պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում գրանցված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով, կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին բոլոր հնարավոր կապի միջոցներով հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու համար: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը մուծելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն եռակողմ պայմանագրի՝ Դեպոզիտարիան՝ արժեկտրոնի գումարների վճարման հիմքով, մինչև արժեկտրոնների վճարման օրվա 14:00 ՀՀ ԿԲ է ներկայացնում տեղեկատվություն Պարտատոմսի արժեկտրոնների վճարման փաստի մասին:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

ԱԳ = (FV x C) / k,

որտեղ՝

ԱԳ-ն արժեկտրոնի գումարն է,

FV- մեկ Պարտատոմսի անվանական արժեքն է,

C- տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների կիսամյակային վճարման դեպքում k=2):

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

- AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

- FV – մեկ Պարտատոմսի անվանական արժեքն է,
- C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը, (արժեկտրոնների կիսամյակային վճարման դեպքում՝ k=2),
- Օրերի հաշվարկման պայմանականությունը Պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual-ը, ընդ որում
    - DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1];
    - DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1];
    - D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է;
    - D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է;
    - D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

2.3.10 **Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը**

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը (մինչև մարումը տարեկան եկամտաբերություն, yield to maturity, YTM) տեղաբաշխման ընթացքում լինելու է անփոփոխ և հավասար Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությանը. վերջինս կազմում է տարեկան 7.65% (յոթ ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական տոկոս):

2.3.11 **Նոր թողարկման մասին տեղեկատվություն**

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումն ընդունվել է Թողարկողի Տնօրենների Խորհրդի՝ 2024թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ, որով սահմանվել են թողարկման հիմնական պայմանները, այդ թվում՝ թողարկման ընդհանուր ծավալը (80,000,000 (ութսուն միլիոն) ԱՄՆ դոլար), թողարկման արժույթը (ԱՄՆ դոլար), ժամկետայնությունը (3 (երեք) տարի), իսկ տարեկան արժեկտրոնային եկամտաբերության (տոկոսադրույքի) հաստատման լիազորությունը վերապահվել է Ընկերության Գլխավոր տնօրենին: Վերջինիս 2025թ. հունվարի 29-ի Թիվ 010 որոշմամբ այն սահմանվել է տարեկան 7.65% (յոթ ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական տոկոս):

Տնօրենների Խորհրդի որոշման համաձայն՝ առաջարկվել է Թողարկողի Ընդհանուր Ժողովին հաստատել Պարտատոմսերի թողարկումը որպես խոշոր գործարք՝ ըստ Ընկերության կանոնադրության, որն էլ հաստատվել է Թողարկողի Ընդհանուր Ժողովի՝ 2024թ. հոկտեմբերի 23-ի որոշմամբ:

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1 **Առաջարկի պայմանները և վիճակագրությունը**

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են ֆոնդային բորսայից դուրս, ուղիղ վաճառքի միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսվելու է 2025թ. փետրվարի 12-ին և տևելու է 90 (իննսուն) աշխատանքային օր:

Տեղաբաշխման ընթացքում գործում են առաջարկից օգտվելու հետևյալ պայմանները.

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողը վճարումը պետք է կատարի մինչև Պարտատոմսերի ձեռքբերման օրվա ավարտը՝ Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման հիմքով: Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված համապատասխան բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտ-հանձնարարակաները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում Պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ բանկային հաշվի վրա մնալը՝ մինչև Պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի Պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

*V = P * Q, որտեղ՝*

- *V-ն Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է:*
- *P-ն Պարտատոմսերի ձեռք բերման հայտի Բանկ ներկայացման օրվա դրությամբ Պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է Ազդագրի 2.4.3.1 բաժնի համաձայն:*
- *Q-ն Պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:*

2.4.1.1 ***Առաջարկի ընդհանուր ծավալը***

Պարտատոմսերի թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 80,000,000 (ութսուն միլիոն) ԱՄՆ դոլար:

2.4.1.2 ***Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը***

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսվելու է 2025թ. փետրվարի 12-ին և տևելու է 90 (իննսուն) աշխատանքային օր:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե առկա են հետ վերադարձման ենթակա դրամական միջոցներ, ապա դրանք վերադարձվում են Թողարկողի կողմից՝ հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար:

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ազդագրի լրացում, որը կապված է Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն

նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է Տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 5 (հինգ) աշխատանքային օրը՝ Ազդագրի լրացման հրապարակումից հետո, իսկ արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված դրամական միջոցների վերադարձը պետք է իրականացվեն հետգնման պահանջը ներկայացնելուց հետո՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ Օրենքի համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Տեղաբաշխողը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.9 Թողարկողի կառավարման մարմինները և անդամները

3.9.3 **Թողարկողի կառավարման մարմինների անդամները**

3.9.3.1 ***Թողարկողի խորհրդի անդամները***

Թողակողի Խորհրդի լիազորությունները պատվիրակված կամ փոխանցված չեն այլ առևտրային կազմակերպության (կառավարող կազմակերպության) կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

Թողարկողի Խորհրդի անդամներն են՝

1. **<u>Տիգրան Գասպարյան</u>**՝ պարոն Գասպարյանը փորձառու կառավարիչ է, ով ավելի քան 20 տարի աշխատել է «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՍՊԸ-ում, որը հանդիսանում է մասնագիտացված աուդիտի, հարկային և խորհրդատվական ընկերությունների ցանց և Մեծ Քառյակ աուդիտորական ընկերություններից մեկը: 2014թ. հոկտեմբերից մինչև 2023թ. մարտը պարոն Գասպարյանը զբաղեցրել է «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՍՊԸ-ի գործընկեր կառավարչի պաշտոնը: «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՍՊԸ-ում աշխատելու ընթացքում պարոն Գասպարյանը ղեկավարել է աուդիտորական աշխատանքներ և խորհրդատվական նախագծեր հեռահաղորդակցության ոլորտի խոշորագույն ընկերությունների համար ՀՀ-ում և արտերկրում: Մինչ «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՍՊԸ-ում աշխատանքի անցնելը՝ 1998-2002թթ.-ին աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում:

    a. Բնակության վայրը՝ Հայաստանի Հանրապետություն:

    b. Զբաղեցրած պաշտոնը՝ Թողարկողի խորհրդի անդամ՝ ընտրված Թղարկողի Ընդհանուր Ժողովի 14.03.2024թ. որոշման համաձայն (վերընտրված՝ Թողարկողի տարեկան Ընդհանուր Ժողովի 28.06.2024թ. որոշման համաձայն), Թողարկողի խորհրդի նախագահ՝ ընտրված Թողարկողի Տնօրենների խորհրդի 29.07.2024թ. որոշման համաձայն:

    c. Իրավասություններն ու պարտականությունները՝ համաձայն Թողարկողի կանոնադրության և կիրառվող օրենսդրության, տես Ազդագրի 3.9.2.1 մասը:

2. **Ալ-Նուր Ռամջի (Al-Noor Ramji)**՝ 2004-2010թթ.-ին պարոն Ռամջին զբաղեցրել է «BT (British Telecom) Innovation and Design» ընկերության գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնը և «BT Group (British Telecom)» ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների խմբի տնօրենի պաշտոնը, հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող աշխարհի առաջատար ընկերություններից մեկը:

   Նա ներկայումս Հնդկաստանի առաջատար բազմամիլիարդանոց կոնգլոմերատ Tata Motors-ի խորհրդի անդամ է: Պարոն Ռամջին 2016-2022թթ զբաղեցրել է Ասիայում և Աֆրիկայում ապահովագրական և ակտիվների կառավարման ծառայություններ առաջարկող Prudential Plc ընկերույթունների խմբի Chief Digital Officer-ի և գործադիր խորհրդի անդամ, իսկ 2013-2015թթ-ներին Google-ի կողմից ձեռք բերված Apigee ծրագրային ապահովման մշակող ընկերության խորհրդատվական խորհրդի անդամի խպաշտոնը: Պարոն Ռամջին 2010-2013թթ.-ին եղել է Misys plc-ի մաս կազմող, Միացյալ Թագավորությունում բանկային և հեռահաղորդակցության ոլորտում ծրագրային ապահովման մշակմամբ զբաղվող ընկերությունների խմբի անդամ հանդիսացող Misys Banking ընկերության գլխավոր գործադիր տնօրենը:

   a. Բնակության վայրը՝ Միացյալ Թագավորություն:

   b. Զբաղեցրած պաշտոնը՝ Թողարկողի խորհրդի անդամ՝ ընտրված Թողարկողի Ընդհանուր Ժողովի 14.03.2024թ. որոշման համաձայն (վերընտրված՝ Թողարկողի տարեկան Ընդհանուր Ժողովի 28.06.2024թ. որոշման համաձայն):

   c. Իրավասություններն ու պարտականությունները՝ համաձայն Թողարկողի կանոնադրության և կիրառվող օրենսդրության, տես Ազդագրի 3.9.2.1 մասը:

3. **Դանիել Էկերտ (Daniel Eckert)**՝ պարոն Էկերտը խորհրդի պրոֆեսիոնալ անդամ է և ճանաչված առաջատար փորձագետ ֆինանսական տեխնոլոգիաների (fintech) և թվայնացված մանրածախ առևտրի: Վերջին 10 տարիների ընթացքում (2010-2020թթ.) նա զբաղեցրել է տարբեր պաշտոններ, վերջինը՝ որպես Walmart Services & Digital Acceleration-ի ավագ փոխնախագահ Walmart կորպորացիայում (ԱՄՆ-ի խոշորագույն մանրածախ առևտրով զբաղվող ընկերությունը):

Պարոն Էկերտը ներկայումս հանդիսանում է նաև ծրագրային ապահովման մշակման ամերիկյան HungerRush ընկերության տնօրենների խորհրդի անդամ, ամերիկյան առաջատար վճարային ծառայությունների և լուծումների ընկերության՝ Aurora Payments-ի տնօրենների խորհրդի անդամ, և գլոբալ մասնագիտացված ներդրումային ընկերության՝ Corsair-ի տնօրենների խորհրդի անդամ:

Նա նաև հանդիսանում է Սան Ֆրանցիսկոյում գործող ստարտափ Commerce Ventures վենչուրային ընկերության ավագ խորհրդական, ինչպես նաև A9T Advisors-ի հիմնադիրը, որը ֆինանսական խորհրդատվական ծառայություններ է մատուցում, մանրածախ և սպառողական ծառայություններ մատուցող ընկերությունների:

2020թ.-ին պարոն Էկերտը զբաղեցրել է Green Dot Corporation ամերիկյան ֆինտեխ ընկերության արտադրանքի, ռազմավարության և զարգացման գծով գլխավոր պատասխանատուի պաշտոնը, իսկ 2005-2009թթ.-ին եղել է ավագ փոխնախագահ ԱՄՆ-ում HSBC-ի քարտային ծառայությունների և մանրածախ ծառայությունների գծով:

a. Բնակության վայրը՝ ԱՄՆ:

b. Զբաղեցրած պաշտոնը՝ Թողարկողի խորհրդի անդամ ընտրված Թողարկողի Ընդհանուր Ժողովի 14.03.2024թ. որոշման համաձայն (վերընտրված՝ Թողարկողի տարեկան Ընդհանուր Ժողովի 28.06.2024թ. որոշման համաձայն):

c. Իրավասություններն ու պարտականությունները՝ համաձայն Թողարկողի կանոնադրության և կիրառվող օրենսդրության, տես Ազդագրի 3.9.2.1 մասը:

4. **Սպիրոս Իերոթեու (Spyros Ierotheou)**՝ պարոն Իերոթեուն իրավաբան է և Կիպրոսի իրավաբանների ասոցիացիայի անդամ 1997թ.-ից: Նա իրավագիտության կոչում է ստացել Շեֆիլդի համալսարանից (Մեծ Բրիտանիա), և Եվրոպական և Համեմատական իրավունքի մագիստրոսի կոչում Մաաստրիխտի համալսարանից (Նիդերլանդներ):

Նա աշխատել է Կիպրոսի Հանրապետության իրավաբանական գրասենյակի Եվրոպական միության իրավունքի բաժնում, ինչպես նաև Պետական օգնության վերահսկողության հանձնակատարի գրասենյակում, իսկ 2006թ.-ից հանդիսանում է Ierotheou, Kamperis & Co. LLC փաստաբանական գրասենյակի գործընկեր:

Պարոն Իերոթեուն զբաղվել է արժեթղթերի շուկայի կորպորատիվ և առևտրային հարցերի և ֆինանսական գործիքների հետ կապված դատական գործերով: 2017թ. մայիսից նա Արբիտրների լիազորված ինստիտուտի անդամ է:

a. Բնակության վայրը՝ Կիպրոսի Հանրապետություն:

b. Զբաղեցրած պաշտոնը՝ Թողարկողի խորհրդի անդամ՝ ընտրված Թողարկողի Ընդհանուր Ժողովի 14.03.2024թ. որոշման համաձայն (վերընտրված՝ Թողարկողի տարեկան Ընդհանուր Ժողովի 28.06.2024թ. որոշման համաձայն):

c. Իրավասություններն ու պարտականությունները՝ համաձայն Թողարկողի կանոնադրության և կիրառվող օրենսդրության, տես Ազդագրի 3.9.2.1 մասը:

5. **Լևոն Ռուբինյան**՝ պարոն Ռուբինյանն ունի շուրջ 18 տարվա փորձ բանկային համակարգում, մասնավորապես՝ թվային բիզնեսի զարգացման, հաճախորդների սպասարկման գործընթացների կառավարման և արդյունավետության բարձրացման ոլորտներում:

2006-2024թթ. աշխատել է «Ինկեկոբանկ» ՓԲԸ-ում՝ զբաղեցնելով նաև բարձր օղակի ղեկավար պաշտոններ (2017-2019թթ.՝ Տնօրինության անդամ-Գործառնական գծով տնօրեն, 2019-2024թթ.՝ Տնօրինության անդամ-Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն): Այդ ընթացքում ղեկավարել է հաճախորդների համար նորարարական ծառայությունների մշակման և ներդրման, ինչպես նաև կազմակերպության թվային փոխակերպման նախագծեր՝ համակարգելով մեծ թիմերի աշխատանքներ: Իրականացրել է նաև ռազմավարական նպատակների մշակում և իրագործում, բիզնեսի եկամուտների և ծախսերի կառավարում, ֆինանսական, տեխնոլոգիական և մարդկային ռեսուսների արդյունավետ բաշխման կառավարում և այլն:

Բացի այդ, զբաղեցրել է նաև «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի Անհատական բանկինգի և Մարկետինգի ծառայության ղեկավարների պաշտոնները:

a. Բնակության վայրը՝ Հայաստանի Հանրապետություն:

b. Զբաղեցրած պաշտոնը՝ Թողարկողի խորհրդի անդամ ընտրված Թողարկողի Ընդհանուր Ժողովի 15.01.2025թ. որոշման համաձայն:

c. Իրավասություններն ու պարտականությունները՝ համաձայն Թողարկողի կանոնադրության և կիրառվող օրենսդրության, տես Ազդագրի 3.9.2.1 մասը:

3.9.3.2 ***Թողարկողի տնօրենը***

Թողակողի տնօրենի լիազորությունները պատվիրակված կամ փոխանցված չեն այլ առևտրային կազմակերպության (կառավարող կազմակերպության) կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

Թողարկողի գլխավոր տնօրենն է Արմեն Ավետիսյանը: Պարոն Ավետիսյանը 1995 – 1999թթ.-ին ստացել է տնտեսագիտության բակալավրի կոչում Պլեխանովի համալսարանում, իսկ 2019–2020թթ. բիզնեսի կառավարման մագիստրի կոչում Մոսկվայի Սկոլկովոյի բիզնեսի կառավարման դպրոցում: Իր մասնագիտական կարիերան պարոն Ավետիսյանը սկսել է 2013–2016թթ. MTS Group ընկերությունների խմբում որպես Կրասնոյարսկի տարածաշրջանի տնօրեն, այնուհետ 2016-2019թթ.-ին Մոսկվայի տարածաշրջանային զարգացման տնօրեն, 2019-2021թթ.-ին Մոսկվայի տարածաշրջանային զարգացման փոխնախագահ, իսկ 2021թ.-ից մինչ 2022թ. հունիս փոխնախագահ IoT-ի և արդյունաբերական ավտոմատացման գծով: 2022թ. հունիսից մինչ այսօր պարոն Ավետիսյանը հանդիսանում է Թողարկողի գլխավոր տնօրեն:

a. Բնակության վայրը՝ Հայաստանի Հանրապետություն:

b. Զբաղեցրած պաշտոնը՝ Թողարկողի գլխավոր տնօրեն

c. Իրավասություններն ու պարտականությունները՝ համաձայն Թողարկողի կանոնադրության և կիրառվող օրենսդրության, տես Ազդագրի 3.9.2.2 մասը:

d. Թողարկողի կազմից դուրս գործունեության հակիրճ նկարագրություն՝ նման գործունեություն առկա չէ: